


ՏԱՍՆ ԵՒ ԵՕԹԵՐՈՐԻ ՏԱՐԻ



Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:
Մեր հասցեն. Тифлисть. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և սուր օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
Իւրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹԻՒՆ

Թարգմանական գրականութիւն—Ներքին ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Նամակ Նոր-խաչմազից. Ներքին
լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Երկբայետեան
հաշնակցութեան դէմ. Տեղեկութիւններ թիւրքաց
Հայաստանից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.
—ԲՈՐՍԱ. —ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. —ԲԱՆԱՍԻ-
ՐԱԿԱՆ. Պարբերից.

ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

II

Մեր անցեալ յօդուածում խօսելով թարգ-
մանական գրականութեան մասին, մենք
այն միտքը յայտնեցինք, որ մեր գրակա-
նութեան այդ ճիւղը չէ ունեցել և չունի
սիւստեմատիկան ընթացքը, և ոչ մի
մասում ամբողջութիւն չէ ներկայացնում:

Մեր թարգմանական գրականութեան
մէջ նկատվող այդ մեծ պակասութիւնը
ունի իր պատճառները, որոնցից մի քանի-
սի վրա և մենք կանգ կառնենք:

Թարգմանական ճիւղը ընդհանրապէս
Հայոց գրականութեան մէջ երբորդ ա-
կան նշանակութիւն է ունեցել. նրա վրա
նայել են ոչ թէ իբրև մեր գրականութեան
համար մի անհրաժեշտ տարրի վրա,
այլ իբրև մի երրորդական նշանակութիւն
ունեցող լրացուցիչ մասի վրա, որը կար-
ծէք միշտ պէտք է աննշան դեր կատարէր,
առանց ընդունակ լինելու գրականութեան
մէջ մի առանձին, աչքի ընկնող տեղ բռն-
նելու:

Այդ սխալ և միակողմանի կարծիքի
պատճառով մեր աշխարհիկ թարգմանա-
կան գրականութեան սկզբնաւորութեան
օրից սկսած, գրական ասպարիզում գոր-
ծողներից շատ քչերն են իրանց ոյժերը
նուիրել այդ ճիւղին, շատ քչերն են իրանց
ոյժքը դարձրել թարգմանական գրականու-
թեան վրա: Ընդհանրապէս, գրականու-
թեան շրջանում յայտնի ոյժերը միշտ խոյս
են առնել Հոգաբարձի մեր գրականութեան
թարգմանական ճիւղի վրա, և շատ քիչ

բացառութեամբ, բացի մի երկու նշանա-
ւոր օտար գրողների մի քանի հատոր
թարգմանութիւններից, մեր թարգմանա-
կան գրականութիւնը պատկանում է այն-
պիսի անձանց, որոնք իրանց պատրաստու-
թեամբ և իրանց ոյժերով չէին էլ կարող
աւելի տալ, քան թէ տուել են և տալիս են
իրանց թարգմանութիւններով: Եւ Հէնց
այդ պատճառով մենք թարգմանիչներ շատ
քիչ ենք ունեցել, մենք ունեցել ենք սի-
րողներ, բայց գրականութեան ծանօթ
և մի որոշ ծրարով աշխատող թարգմա-
նիչներ համարեալ թէ չենք ունեցել: Ճշ-
մարիտ է, թէ թիւրքացայերի մէջ և թէ
կովկասում թարգմանական գրականութեան
մէջ մի քանի հոգաւոր աշխատութիւն-
ներ, մի քանի կրտսերներ թարգմանված
են կարող անձանց գրողի, բայց դրա հետ
միասին շատ են և այն դէպքերը, երբ այս
և այն եւրոպական հոգաւոր գրողի աշ-
խատութիւնները թարգմանել են այնպի-
սի սիրող-թարգմանիչներ, որոնց հազիւ
կարելի էր հաւատալ Մայն-Ռիդի գրքերի
կամ դանդաղ մանկական վէպիկների
թարգմանելու:

Մենք կատարելապէս աւելորդ ենք հա-
մարում խօսել այն մասին, որ մի որ և է
գիրք թարգմանող, կամ առհասարակ մի
թարգմանիչ պէտք է լաւ ծանօթ լինի
այն լեզուին, որով թարգմանում է. ասում ենք,
աւելորդ ենք համարում այդ մասին խօսելը,
որովհետեւ այնպիսի պարզ ճշմարտութիւն-
ների վրա կանգ առնել կը նշանակէ ապա-
ցուցանել, որ բաղաձայն Հոգ պէտք է ու-
տի: Թողնելով մի կողմ այդ և դրա նման
տարրական պայմանների վրա խօսելը,
մենք մասնաւոր կանենք մի ուրիշ հան-
գամանքի վրա, որը անկասկած մեծ
ներգործութիւն է ունեցել մեր թարգմա-
նական գրականութեան աղքատ և կղը-
կուտ լինելու վրա: Մեր խօսքը թարգմա-
նիչներին, այսպէս ասած գրականական
և աշխատարարաստութեան մասին է:
Որպէս զի մի որ և է թարգմանիչ կարո-

ղանայ ըմբռնել թէ ինչ տեսակ գրքերի
թարգմանութիւն կարող է ներկայ հան-
գամանքներում աւելի օգտուէտ լինել Հայ
ընթերցողների համար, որպէս զի թարգ-
մանիչը կարողանայ ըմբռնել, թէ ինչ տե-
սակ օտար աշխատութիւններ պիտանի են
թարգմանութեան, և որոնք են այն հե-
ղինակները, որոնց ստեղծագործութիւնները
կամ գրուածները անհրաժեշտաբար պէտք
է մայրենի գրականութեան սեփականու-
թիւն դառնան, նա, այսինքն թարգմանի-
չը պէտք է ծանօթ լինի ընդհանրապէս
գրականութեան հետ, պէտք է իմանայ
թէ այս և այն հարցի մասին ինչ գր-
ւածքներ կան օտար գրականութեան մէջ
և թէ դրանցից որն է աւելի լաւ, որը ա-
ւելի յարմար, և որը աւելի գնահատելի:

Մեր թարգմանիչները—մեր խօսքը ան-
շուշտ բացառութիւնների մասին չէ—
զուրկ են եղել և զուրկ են այդ գլխաւոր
յատկութիւնից, և այդ պատճառով նրանց
վաստակները պատահական բնաւորութիւն
ունեն: Պատահմամբ, դաւառական ջաղա-
քում նստած մի որ և է վարժապետի
ձեռքն ընկնում է մի որ և է գրքը, վէպիկ,
կամ մի ուրիշ տեսակ աշխատութիւն, նա
այդ հաւանում է—առանց իմանալու թէ
նրանից աւելի լաւ գրքեր կան նոյն հար-
ցի մասին—և նա սկսում է թարգմանել
այդ գրքերը: Եւ քանի որ քիչ գրքեր, և
մարդ զարմանում է, թէ ինչպէս կարելի էր
ժամանակ գործ դնել մի այնպիսի աշխատու-
թեան վրա, որը կամ արեւի վն է գցված և
կամ որի մաքերն են հնացած: Կիցուք մի
ուրիշը իրան նուիրել է թարգմանութիւն-
ներին, և մէկը միւսին յետեւից նա յոյս է ըն-
ծալում գրքեր. քննում էք այդ գրքերը
և համոզվում, որ թարգմանիչը թարգմա-
նութիւններ անելիս, ծանօթ չէ եղել գր-
ականութեան այն ճիւղին, որից ինքը
թարգմանել է և կամ թարգմանելիս ի նը-
կատի է ունեցել միայն այն հանգամանքը,
թէ արդեօք շատ կը ծախվի այդ գրքերը,
և կարող է արդեօք նկատական օգուտ բե-
րել: Թողի հաշուով պէտք է բացատրել այն

երևոյթը, որ շատ անգամ մի և նոյն
թարգմանիչը այնպիսի գրքեր է թարգմա-
նում, որոնցից մէկի մէջ յայտնած մաքե-
րին հակառակ են լինում միւս գրքի մէջ
յայտնված մաքերը, և կամ թէ պարզ ե-
րևում է, որ այդ գրքերի թարգմանողը,
թարգմանել է այն, ինչ որ պատահմամբ
իր ձեռքն է ընկել. կամ պատահմամբ
լսել է մի ուրիշից, որ այնպիսի մի հե-
տաքրքրական գիրք կայ, և շատ լաւ կը
լինի, եթէ թարգմանվէր...

Շատ պարզ է, ի հարկէ, որ այնպիսի
անպատրաստ, գրականութեան միանգամայն
անծանօթ թարգմանիչների գործունեու-
թիւնը մեր մէջ ոչինչ սիւստեմատիկա-
կան ընթացք չէ կարող ունենալ, ոչինչ
պրօգրամի չէ կարող հետեւել, որի շնոր-
հով և թարգմանական գրականութիւնը
չունենալով պատրաստված, տեղեւի և
հասկացող աշխատողներ, կը մնայ աղ-
քատ, կցկտուր, վերին աստիճանի թերի,
լի ամեն տեսակ անպէտք, կամ անշուն
գրքերով, և զուրկ օտար գրականութեան
նշանաւոր և օգտակար սեփականութիւն-
ներից: Ահա ուրեմն, թէ ինչու մենք չու-
նենք թարգմանական գրականութեան
թիւն, և հաշ թէ ինչու մեր թարգմա-
նական գրականութիւնը դեռ չէ բացված
թառամում է:

Ի դէպ մի քանի խօսք ևս—Մենք կարծում
ենք, որ այդ վատ ընթացքը մասամբ կը
սահմանափակվէր, և մեր թարգմանական
գրականութիւնը մի կողմից ազատվելով
անշուրհ և անպէտք գրքերից, միւս կող-
մից էլ կը սկսէր լաւ գրքերով հարստու-
նալ, եթէ կարելի լինէր մի ու զեց ոյց
տալ այն բոլոր մարդկանց, որոնք ուզում
են թարգմանութիւններ անել, բայց որոնք
անծանօթ լինելով օտար գրականութիւն-
ներին, չը գիտեն, թէ ինչ թարգմանեն,
որն է աւելի լաւ և աւելի յարմար գիրքը
թարգմանութեան համար: Արդ, ո՞վ կա-
րող է տալ այդ ուղեց ոյցը: Մասնաւոր
անձինքներից այնպիսի մի ուղեցոյց սպա-
սել դժուար է. և մեր կարծիքով Թիֆլիսի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՐԻԶԻՑ

IX

Ինչպէս ասեցի իմ անցեալ թղթակցութեանս
մէջ, ինչեւեղ իջեցան աշտարակից, ես մտայ
Տրօկադէօրի այգին: Որքան սքանչելի տեսարան
է... Տրօկադէօրի պալատի վն շինութեան առ-
ջն, ահագին տարածութեան վրա փռված է կար-
ծես մի կանաչ դուռ, որի շրջանակը կազմում
են բազմատեսակ և բազմաոյն ծաղկանոցները,
իսկ կանաչ խոտի մէջտեղ և նոյն իսկ նալի ձև
ունեցող Տրօկադէօրի և նրա ընդարձակ զալէ-
բաների առջն վազում են առատ ջրեր, գահա-
վիժվում են ջրվեժներ, խլիւմ են ֆօնտան-
ներ...

Այգու կենտրոնի երկու կողմը, ծածկված ալ-
բաների այս ու այն կողմը, գտնվում են այգե-
գործութեան բաժիններ, օրանմէրէաներ և ամեն
տեսակ նորատունկ ծառերի ահագին տարածու-
թիւն: Ինքն այգին շատ ընդարձակ է, այնպէս
որ ցուցահանդիսի այդ մասի բոլոր շինութիւն-
ները հասարակաց աշտատանների միմիջոր-
թեան բաժինը, անտառապահական բաժինը, հիւ-
րանոցներն ու կաֆէները, ծաղիկներ ու մրգեր
պարունակող վրանները, օրանմէրէաները, վեր-
ջապէս անային այլ և այլ թուղանների տեսակ-
ներ պարունակող տնակներն ու պովիլիօնները,—
այդ բոլորը այգու խիտ բուսականութեամբ է
շրջապատված:

Տրօկադէօրից դէպի ձախ կողմը գտնվում է

հասարակաց աշտատանների միմիջոր-
թեան բաժին մեծ շինութիւնը, ոսկեգոծ գմբէթով Շի-
նութեան բազմաթիւ դահլիճները պարունակում
են իրանց մէջ այլ և այլ շինութիւնների, կա-
մուրջների, փարեանների և այլ յատակագծեր, ու-
պա այլ և այլ շինութիւնների նուրբ մոզէներ,
որոնց թիւում և Ուլլին գաւառում էլքելի ձեռքով
կառուցված երկաթեայ կամուրջի մոզէլը, որի
սիւները նոյն ոճով են կառուցված, ինչ ոճով
կառուցված է և էլքելեան աշտարակը. այնուհն-
տե դուք տեսնում էք կատարելագործված սիւ-
տեմների ահագին լապտերների ծովային փարօ-
սների համար և այնքան Տրօկադէօրից դէպի աջ
գտնվում է մի տարբերակ շինութիւն, դա ան-
տառապահական բաժինն է. ամբողջ երկար-
կանի տունը կառուցված է հում փայտից, այ-
սինքն անտառային ամեն տեսակ փայտերից:
Այդ շինութեան մէջ անտառապահութեան մաս-
նագէտը կարող է հանդէս գրված ամեն տեսակ
փայտեղէն նմուշների հարուստ և լիակատար ժո-
ղովածուի օգնութեամբ կատարելապէս ուսում-
նասիրել իր առարկան:

Առհասարակ ցուցահանդիսի իւրաքանչիւր բա-
ժինն այն աստիճան հարուստ է, որ այս կամ
այն առարկայի մասնագէտը կատարելապէս մի-
ջոց ունի, այցելելով իր մասնագիտութեան վե-
րաբերեալ բաժինը՝ ծանօթանալ իր մասնագի-
տութեան թէ պատմութեան և թէ վերջին ժա-
մանակներում նրա արած առաջադիմութեան
հետ: Այդպէս են, օրինակ, առողջապահական և
առողջապահական բաժինները ինվալիդների հարկա-
վայրում, նոյն տեղը գտնվող «Կարմիր խաչի»
ընկերութեան բաժինը, ապա «Quai d'Orsay»
գետեգրում գտնվող փոստային և հեռագրական

միջապագային բաժինը, որտեղ դուք կը գտնէք
փոստային և հեռագրական գործի պատմութեան
վերաբերեալ բոլոր օրինակները և կը կարողա-
նաք իրականապէս ծանօթանալ այդ մասնագի-
տութեան վերաբերեալ արած առաջադիմութեան
հետ: Գիշալ բաժնում, օրինակ, դուք կը գտնէք
ոչ թէ միայն հեռագրական ամեն տեսակ թէ
հին և թէ նոր սիւստեմների գործիքներ, ոչ թէ
միայն կը կարողանաք գործի հետ ծանօթանալ
նմուշներով և մոզէներով, բայց այդ բաժնի մէջ-
տեղ, երկաթուղային ընկերների վրա պատրաստ
գրված է, ի տես այցելուների, բնական մեծու-
թեամբ մի փոստային և հեռագրական վագոն,
ամենալեզելին և կատարելագործված սիւստեմային:

Բայց վերադառնալով Տրօկադէօրի բաժնի նկա-
րագրութեանը: Անցնելով հասարակաց աշխա-
տանքների, անտառապահութեան, այգեգործու-
թեան, օրանմէրէաների և թուղանութեան
բաժինները և կտրելով ծածկված ալբաներից մի-
նի միջով Տրօկադէօրի այգին, դուք մտնում էք
ուղղակի նոյն ինքն Տրօկադէօրի շինութեան մէջ:
Տրօկադէօրի ահագին պալատը կառուցված է
Պարիզի նախկին համալսարանային ցուցահանդիսի
ժամանակ յատկապէս ժողովրդական կոնցերանների
համար: Բացի մեծ կոնցերանային դահլիճից, որը իր
ընդարձակութեամբ Եւրոպայի ամենամեծ թատրո-
նական մի ջանքի դահլիճներից պակաս չէ, գտնվում
են Տրօկադէօրի մէջ բազմաթիւ ուրիշ դահլիճներ
և նալաձև կառուցված այդ շինութիւնը ունի իր
ստորին յարկում դեղեցիկ և լայն զալէրէաներ:
Այդ շինութեան դահլիճում տեղի են ունենում
հրապարակական ժողովուրդային խօսքեր,
ներառյալ միջոցային միջոցներ: Այժմ Տրօկադէօրի ըն-
դարձակ սրահներում և զալէրէաներում դեռեղ-

ված են համալսարանային ցուցահանդիսի մի քա-
նի բաժիններ, այն է ճարտարապետութեան և
հնութիւնների բաժինները սրահներում, և տան
ու գլխաւորապէս այգու կահ-կարասիների ցու-
ցահանդէսը զալէրէաներում: Այգու կահ-կարասի-
ները՝ սեղաններ, ալ և այլ ձևի նստարաններ,
շինված են նուրբ, բայց շատ պինդ կերպով՝ կամ
փայտից, կամ երկաթից և կամ յարդից. քննելով
թանգ չեն:

Տրօկադէօրի սրահները մտնելիս մարդ հիւ-
նում է նայի շինութեան շքեղութեան և ճարտա-
րապետութեան նուրբ ճաշակի վրա և ապա
սրահներում հանդէս գրված թանգազին ժողովա-
ծաների վրա: Սկսում էք եզրապատական դահլիճը,
որտեղ կարող էք կատարելապէս ծանօթանալ
հին եզրապատական ճարտարապետութեան և քան-
դակագործութեան արհեստի հետ, ապա անց-
նում էք այն սրահները, որտեղ հանդէս են դըր-
ված նորադոյն, զլխաւորապէս ֆրանսիական
ճարտարապետութեան վերաբերեալ օրինակները,
մոզէները, լուսանկարները և պատկերները: Նոյն
իսկ շինութիւնների ամբողջ մասերը, օրինակ,
հին պալատների և եկեղեցիների դռներն ու ֆա-
նադները տեղափոխված են այդտեղ... Չը տես-
նողին անհաւատալի կը լինի այդ... Վերջապէս
անցնում էք այն սրահները, որտեղ հանդէս են
գրված ամենաթանգազին հնութիւնների այլ և
այլ ժողովածուներ: Ամեն բան կայ այստեղ.
տուփեր, եկեղեցական դարձեր, կանանց զարդա-
րանքներ, անտառանների թանգազին կազմեր,
թաճակներ, մատանիներ, խաչեր, ամրոցների, ե-
կեղեցիների ամբողջ մոզէներ, քանդակագործու-
թիւններ, թանգազին գորգեր, մանուսկրադ XVI և
XVII դարերի Գօթիկն ապւած հազագիւտ նուրբ

«Հրատարակական ընկերութիւնը» մեծ ծառայութիւն արած կը լինի, եթէ այդ գործում հանդէս գայ, և ուղեցոյց հանդիսանայ մեր գանազան կարգի թարգմանիչներին համար: Եթէ «Հրատարակական ընկերութիւնը» կը սպասի, որ ստանայ գանազան տեղերից և գանազան անձինքները բաւականաչափ պիտանի զրուածքներ կամ թարգմանութիւններ տպագրելու համար,—նա իր յոյսերի մէջ կը խաբւի: «Հրատարակական ընկերութիւնը» ինքը ահագին եռանդ ներշնչած կը լինի և թարգմանական գրականութեանը մեծ ծառայութիւն արած կը լինի, եթէ իւր աւքանչիւր տարի տարի գրականութեան ձեռքի գրքերի ցուցակ պատրաստէ, հրատարակէ այդ ցուցակը, առաջարկելով ցանկացողներին այդ ցուցակի մէջ մտցրած գրքերը, որոնք կարող են լինել վիպական, տնտեսական, բժշկական, մանկավարժական, դիւնական և այլն, թարգմանիչ և կամ առանձին տպագրել, և կամ ներկայացնել ընկերութեանը իր հաշուով հրատարակելու համար: Ենթադրելով որ ընկերութիւնը ձեռնհաս կը լինի մի այդպիսի գործում, մենք կարծում ենք, որ մի այդպիսի միջոցի դիմելը թէ ընկերութեան գործունէութիւնը աւելի զգալի կը դարձնէր, և թէ կարող կը լինէր հայոց գրականութեան թարգմանական ձեռքը և հարստացնել և կոկիչ:

Իսկ մեր թարգմանական գրականութեան հարստացնել և կոկիչը անպայման կարեւոր մի ցանկութիւն պէտք է համարել, որովհետեւ մեր գրականութեան ներման մասնակի, և ինքնուրոյն ստեղծագործութիւններով ազդատ մի գրականութեան համար հանրամարդկային արժէք ունեցող տարր մտքերի, օտար ստեղծագործութիւնների և օտար գաղափարների փոխառնելը մի անհրաժեշտութիւն, մի առաջնակարգ պահանջ է և պիտի լինի:

Խ. Մ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԽԱՇՄԱԶԻՑ

Յունիսի 28-ին

Ձեզ արդէն հաղորդեցաւ, որ Նոր-Խաշմազ գիւղի (Ղուբայի գաւառում) բնակիչները, այստեղ վերաբնակված կալուածատեր բժիշկ Ս. Չալանցիի նախաձեռնութեամբ վճարելու հիմնել գիւղական շտեմարան, որը հենց այս տարվանից էլ կը սկսի իր գործունէութիւնը: Ի նկատի ունենալով, որ զիւղական շտեմարանների

գործեր... Առարկաների մեծ մասը փակված, զրկված են ապակու տակ... Ամեն տեղ աչքի են ընկնում ոսկի, արծաթ, մարմարի՜ն, մոլորիկ, թանկագին բարեր...

Առարկաները վերցրած են ժամանակաւորապէս թէ ֆրանսիական այլ և այլ մոզէմներին, թէ ժամանակոր անձանց ժողովածունքները: Հարուստ է, մանաւանդ, Բոտրիլի հնութիւնների ժողովածուն: Այդ հնութիւնները պատկանում են XVIII դարի ժամանակներից սկսած մինչև VI, և նոյն իսկ V դարի ժամանակները: Սրահներից մինում հանդէս է գրված գիպսից շինված ճապոնի մօշէլը Սենտ-Գլենի արքայութեան և նրա գերեզմանոցի: Մօշէլը այնքան մեծ է, որ գերեզմանոցի իւրաքանչիւր գերեզմանաբար կէս վերջով բարձրութիւն ունի և երկու վերջով երկու թաղիւն: Յայտնի է, որ Պարիզից ոչ հեռու գտնվող այդ արքայութեան գերեզմանոցում թաղված են ֆրանսիական թագաւորներից և մեծամեծներից շատերը և նրանց թուով Լեոն Լուսինեան հայոց վերջին թագաւորը: Յիշեալ մօշէլի վրա Լուսին գերեզմանաբար պարզ երևում է և նրա տակը, մօշէլի վրա ոսկի տառերով գրված է. «Léon Lusignan, roi d'Arménie»:

Բայց արդէն ժամը 2 էր. սաստիկ յոգնած անընդհատ մանդաւլուց, եւ ուղիղից քայլերով դէպի Տրոպոլիսի կոնցերտային դահլիճի կաւասան: Այդ դահլիճում ժամը 2 1/2-ին պէտք է սկսվէր Ֆինլանդիայի Հելսինգֆորս քաղաքից եկած ուսանողական երգչիկ խմբի կոնցերտը: Ժողովուրդը արդէն լցրել էր դահլիճի անցքերը, եւ վերջի աւելի էժան տոմսակ ամֆիթէատրում և բարձրացաւ սանդուղքներով: Կոնցերտային դահլիճի գոնապայան կանաչը, որոնք կրում էին մի յայտնի

հիմնել մի շատ կարեւոր խնդիր է մեր բոլոր գիւղերի համար, ի նկատի ունենալով, որ զամի հերթական հարց է մեր գիւղական կեանքում, և վերջապէս իբրեւ մի նորութիւն, աւելորդ է ծանօթացնել այն կանոնները, որոնք համայնական վճռով ընդունվեցան, և որոնց համեմատ գիւղական շտեմարանը պէտք է գործի: Առաջ ենք բերում համայնական վճռի պատճէնը ա մ ր ո ջ ա պ է ու:

1889 թ. յունիսի 15-ին մենք ներքոյ ստորագրեալ Նոր-Խաշմազ գիւղի հայ-լուսաւորական բնակիչներու, 27 ծուխ տեղական հարկատուներու, և 12 ծուխ Նոր-Խաշմազի կալուածատիրոջ հողում բնակվող օտարականներու, յօժարակամ, ընդհանուր համաձայնութեամբ սահմանեցինք սոյն վճիռը, որը բովանդակվում է հետեւեալ յօդուածների մէջ:

1) Սոյն վճռի վրա յիշեալ թիւը մենք ազնւական տիկին Հ. Պ. Չալանցիին պատկանեալ Նոր-Խաշմազ գիւղում և նրա համաձայնութեամբ հիմնում ենք գիւղական արդիւնների պաշարի պահեստ (շտեմարան), նոյն հիմանց վրա, ինչպէս որ են նոյնանման հիմնարկութիւնները Ռուսաստանի միւս գիւղերում:

2) Այս նպատակով յիշեալ ծուխներից իւրաքանչիւրը սոյն վճռով պարտաւորվում է ամեն տարի դաշտային արդիւնաբերութիւնը ժողովուրդ միջոցին՝ յօգուտ շտեմարանի յատկացնել ստացած իւրաքանչիւր գիւղական բուրաց (սօմար) 4 1/2 պուգ ցորենից, կոթիկից, և դարիկից, միական գիւղի քիւլայ (15 ֆունտանոց), և իւրաքանչիւր ծուխից նմանապէս միական գիւղի քիւլայ բրինձ:

Պահանջ. Յիշեալ արդիւնների բերքը, բացի բրինձից, պէտք է հաշուել իւրաքանչիւր ծուխի համար մինչև 10 բուրաց, իսկ նրանից աւելացած բերքը, շտեմարանի օգտին ստանալի պարտաւորեցուցիչ եկամուտի հաշիւ մէջ էլ մտնում:

3) Շտեմարանում միշտ պէտք է թողնել առ ձեռն սերմերի պաշար, ամենաքիչը զոնէ երեք տարվայ համար, իսկ սրանից աւելացածը մասնակցողներից բաղկացած ընդհանուր ժողովի որոշմամբ կարող է բաժանվել տոկոսով կամ փողով վաճառել, զիւղական ուսումնարանի, եկեղեցու, խեղճ համալսարանների, և կամ համայն հասարակութեան կարիքների համար:

4) Ժողոված արդիւնները պիտի պահպանվեն այն բնակարանում, որը ժամանակաւորապէս եկեղեցու բազում յատկացրել է սոյն նպատակի համար Նոր-Խաշմազի կալուածատէրը, մինչև մեր մի նպատակայարմար շինութեան կառուցանելը:

5) Շտեմարանի վերատեսչութիւնը յանձնվում

միակերպ համադրեալ, ցոյց էին տալիս ինձ ճանապարհ և եւ անդադար պէտք է բարձրանայի ու բարձրանայի սանդուղքներով: Եւ արդէն սկսում էի անիծել իմ խնայողութիւնս, որը թեւազրեց ինձ այդքան բարձր տեղ վերցնել, երբ վերջապէս հասաւ այն դրանք, որը տանում էր դէպի ամֆիթէատրը, դուռը բաց դրեալ,— և ապշած ու հիացած մնացի: Այդպիսի շնորհով ճաշակով շինված, լուսաւոր և մի և նոյն ժամանակ ընդարձակ կոնցերտային դահլիճ եւ շատ քիչ եւ տեսել կեանքիս մէջ: Իմ նստած տեղիցս եւ չէի կարող անգամ որչափ պարտերում նստողների դէմքերը, այն աստիճան ընդարձակ է այդ դահլիճը, որը, իմ կարծիքով, տաւ հաղար մարդ կարող է իր մէջ պարտեանկել: Պարտէից բարձր շինված եւ երկու յորի լծաներ, այնուհետեւ անպիսի ամֆիթէատրը, վերջապէս մեղադրեց բարձր կային դեռ աւելի էժան տեղեր՝ գաղթեաներ:

Հարկւր հոգուց բաղկացած ֆինլանդական ուսանողների երգչիկ խումբը, բոլորն էլ ֆրանկեր հագած և սպիտակ գլխարկները ձեռքերին դուրս եկան ընդարձակ էստրադայի վրա: Հարկւր մարդուց բաղկացած խումբը փոքրիկ խումբ էր երևում այդ անագին էստրադայի վրա... Իմ բարձր տեղից եւ անկողնուց էի անգամ որչափ նրանց դէմքերը, բայց երգեցողութիւնը, նոյն իսկ պիանիստի մոմենտները ձայները շատ զեղեցիկ կերպով էին լսվում, այն աստիճան լաւ է բեղունանը այդ անագին դահլիճում: Պէտք է խոստովանվի, որ ֆրանսիացիք զիտեն լսել եւ րաժշտութիւնն ու երգեցողութիւնը. հազարաւոր այդ ամբողջ մէջ տիրում էր մեղեկային լուսնութիւն երգեցողութեան ժամանակ: Ուսանողա-

է իւրաքանչիւր տարի մեր միջից ընտրված չորս անձանց, որոնք տեղական բարեկրօն հօր նախագահութեամբ, կազմում են շտեմարանի յանձնաժողովը:

6) Իւրաքանչիւր տարի մի անգամ Չալանցի առաջին շաբաթում յանձնաժողովը պարտաւորեալ պիտի հրաւիրէ պահեստի մասնակցողներին ընդհանուր ժողովի, որին և յանձնաժողովը տալիս է մանրամասն հաշիւ՝ իր անցեալ տարվայ գործունէութեան մասին, որից յետոյ ժողովը ձեռնառնում է լինում յանձնաժողովի նոր անդամների ընտրողութեան՝ հետեւեալ տարվայ համար:

7) Բոլոր գործերը թէ ընդհանուր ժողովում, կամ թէ յանձնաժողովում վճռվում են ձայների մեծամասնութեամբ՝ ըստ որում ընդհանուր ժողովում իւրաքանչիւր ծուխ ունի մէկ ձայնի իրաւունք:

8) Շտեմարանի վերաբերեալ բոլոր կարգադրութիւնները, թէ ընդհանուր ժողովի կողմից, թէ յանձնաժողովի կողմից, արձանագրվում են առանձին ժապաւինեալ գրքի մէջ, որը պահպանվում է գիւղական միւս ժապաւինեալ գրքերի հետ միասին, և որի վերաբերութեամբ իւրաքանչիւր մասնակցող ազատ վերահսկողութեան իրաւունք ունի ամենայն ժամանակ:

9) Այն ծուխը, որը մի անգամ հրաժարվել է սոյն վճռի 2-րդ յօդուածը կատարելուց՝ առանց յարգելի պատճառների, ընդհանուր ժողովի վրձնով զրկվում է շտեմարանից օգտվելու իրաւունքից, և նրանից պահեստի օգտին նախընթաց տարիների ընթացքում ստացված արդիւններն իւրան յետ չեն դարձնուում: Իսկ այն ծուխը, որը զանազան պատճառներով թողնում է իր բնակչութիւնը Նոր-Խաշմազ գիւղում, ունի իրաւունք իր պահեստին տուած արդիւններից յետ ստանալու միմիայն վերջին տարվայ ընթացքում տրւածը:

10) Իր սրբազան և անձնանուէր պարտականութիւնների դէմ մեղանշող թէ յանձնաժողովի անդամը, և թէ ամբողջ յանձնաժողովը, դատի են ենթարկվում ընդհանուր կանոնների համաձայն:

Այս ամեններով պիտի ղեկավարվի մեր գիւղի նոր շտեմարանը, որին ի հարկէ, բացի ամբողջութիւնից ուրիշ ոչինչ չէ կարելի ցանկանալ:

Մ. Բ. Ա.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ընթերցող հասարակութիւնը, անկասկած, շատ լաւ յիշում կը լինի Վանի կուսակալ Խալի փաշայի պաշտօնական հեռագիրը, որը ապագրվեց «Մշակ» № 70-ի մէջ: Այդ հեռագրի մէջ Սուլթանին տեղեկացնելով Վանի մօտեցում հայ հրոսակների երևալու մասին, կուսակալը հաղոր-

կան խումբը երգում էր ֆիններէն և չիլիերէն լեզուով և իւրաքանչիւր երգից յետոյ, վարձատրվում էր լուռն և ողբոված ծափահարութիւններով: Եւ ճշմարիտ, այդ երիտասարդների երգչիկ խումբը արժանի էր հասարակութեան այդ տեսակ համակրութեան, որովհետեւ կեանքիս մէջ շատ քիչ է պատահել ինձ լսել այդքան ներդաշնակ երգեցողութիւն, այդքան վարժված երգչիկ խումբ...

Կօնցերտից դուրս գալուց յետոյ գնացի Տրոպոլիսի այգում գտնված բէստորաններից միում նախաճաշիկ անելու, կամ ինչպէս մեզ մօտ ասում են՝ ճաշելու (ֆրանսիացիք նախաճաշիկ են անում 12 ժամից սկսած մինչև 2 ժամ, իսկ ճաշում են երեկոյան 7 ժամից սկսած մինչև 9 կամ նոյն իսկ 10 ժամ, իսկ մենք ճաշում ենք 2-ին կամ 3-ին և ընթրիք ենք անում երեկոյան):

Նախաճաշիկից յետոյ ցուցահանդիսից դուրս գալու ժամանակ տուն վերադառնալու համար, եւ նորից անցաւ այգեգործական և հաւաքածական բաժնի մօտով... Պարիզի ցուցահանդէսը հակասութիւնների, կամ աւելի լաւ է ասել՝ ծայրայեղութիւնների աշխարհ է... Էլ ֆիլեան աշտարակից յետոյ՝ ճարտարապետութիւն, ճարտարապետութիւնից յետոյ՝ այգեգործութիւն, այգեգործութիւնից յետոյ՝ պեղարուեստ, պեղարուեստից յետոյ՝ երգեցողութիւն, երգեցողութիւնից յետոյ՝ հաւաքածութիւն և այլն:

Չմայլված կանգնեցի մի րօպէ արուեստական կերպով, առանց թուխ նստող հաւի դուրս բերած քաղմաթիւ սիրուն ձուտերի առջև... Այդ րօպէին մի օրիորդ մօտեցաւ ինձ և սկսեց մի երկար, մանրամասն և շատ ճարտարապետ

դեմ է, որ զինուորների ձեռքով սպանվեց կարապետ Գուլաքաբզեան անունով երիտասարդը, որի մօտ և գտնվել են զանազան թղթեր և Զարկաւոր ենք համարում յայտնել, որ այդ ծիղը չէ՛ Վանից ստացված ծիղ տեղեկութիւններից երևում է, որ սպանվածը Գուլաքաբզեան չէ՛ Սպանված են՝ երկու երիտասարդ, որոնցից մէկը կրում էր Վարդան Եարութիւնեան անունը, իսկ միւսը մի վանեցի երիտասարդ՝ Յովհաննէս Աբրիպասեան անունով:

Լօնդոնից գրում են հետեւեալը. «Այստեղի «Daily News» լրագիրը առաջ բերելով Մանչէսթրի հայերի կողմից պարսից Շահին ներկայացրած ուղերձի բովանդակութիւնը, նկարագրում է, թէ ինչպէս Լօնդոնի և Մանչէսթրի հայերը ներկայացան Շահին: Առաջ ենք բերում այդ լրագրից մի քանի մանրամասնութիւններ. «Յուլիսի 4-ին առաւօտեան ժամը 11-ին Երանի և Արմէնիայի դաւաճները մի փոքրիկ խումբ հաւաքված էր Շահին յատկացրած պալատում: Շահը բարեհաճեց ընդհանր անդիմաբնակ հայերի կողմից կազմած մի պատգամաւորութիւն: Նախընտրին շահնաշի տրուած ուղերձը շատ ճոխ և զեղեցիկ ճաշակով յօրինված և հայերէն լեզուով գրված էր, անգլիերէն թարգմանութեամբ հանդերձ. Ս. վարդապետ Պարոնեան կարգաց ուղերձը հայերէն լեզուով և Լօնդոնի պարսկական դեսպան իշխան Մեքլեմ-Խանը թարգմանեց պարսկերէնի: Այդ ուղերձի մէջ Շահի գալուստը չնորհաւորելով՝ շնորհակալութիւն էին յայտնում պարսկաբնակ հայերին ցոյց տուած հովանաւորութեան համար: Շահը պատասխանելով այդ ուղերձին ասեց, որ իր աչքը միշտ եղել է հայերի վրա և ապագայումն էլ իր պաշտպանութիւնը անպակաս կը լինի»:

Կ. Պոլսից գրում են, որ Խըլմեան Հայրիկ երկու անգամ արդէն Բ. Գուռն է հրաւիրվել դաւնազան խնդիրների մասին բացատրութիւններ տալու, բայց Հայրիկը դեռ չէ դնացել անձնական տկարութեան պատճառով:

Այս օրերս լոյս է տեսել Պետերբուրգում հրատարակվող «Արաք» անունով հանդէսի այս տարվայ առաջին տետրակը, որը, պէտք է ասած, բաւական հաստ է: Տարաբաղդաբար այդ հաստութեանը չէ համապատասխանում անդոյն և անհամ բովանդակութիւնը, որի հետ ծանօթանալուց յետոյ իւրաքանչիւր ընթերցող հանգիստ խղճով կարող է ասել. «Ամեն բան կայ, բայց ոչինչ չը կայ»:

Ուրբաթ օր, յունիսի 7-ին, Թիֆլիսի բանտում երկու կալանաւորվածներ, արտաքննողի խողովակի միջով դուրս գալով՝ փախան:

դասախօսութեան մէջ բացատրել ինձ թէ ինչպէս թուխ նստող մեքենայի միջոցով (couveuse) դուրս են բերվում հաւի ձուտերը: Հարցնելով ինձ թէ որտեղացի եւ ինչպիսի ինձանից իմ այցեւորսը, նա անմիջապէս տուեց ինձ մի քանի բրօշուրներ և յայտարարութիւններ այն կատարելագործված մեքենաների մասին, որոնք այդ տեղ հանդէս էին գրված, որոնք օգնութեամբ տաքացրած ջրի միջոցով, դուրս են բերվում 21 օրում փոքրիկ ձուտեր, յուսալով երեխ որ մեր երկրից, կովկասից այդ գործիքի պատուիրողներ կը գտնվեն: Կատարում եմ դասախօս օրիորդի խնդրեք և հաղորդում եմ ընթերցողներին ֆարսիկայի հասցէն, որը պատրաստում է այն մեքենան, որի օգնութեամբ կարելի է ոչ թէ միայն հաւի, բայց և ուրիշ թռչունների ձուաներից, տաքացրած ջրի միջոցով, արուեստական կերպով դուրս բերել փոքրիկ ձուտեր: Այս հասցէն. Comptoir général de l'élevage, Paris, 35, Rue Cler.

Այդ մեքենաները, որոնք ոչ թէ լաճպաների, այլ տաքացրած ջրի միջոցով են դուրս բերվում հաւի ձուտեր, և որոնք ամենակատարելագործված մեքենաներ են համարվում, պատկանում են Frémond (Ֆրէմոն) ինձէնէրի սիւստեմային: Մեքենաների դինք է 25 ֆրանկից սկսած, մինչև 190 ֆրանկ:

Վաղը սկսում եմ այցելել ցուցահանդիսի աւանանշանաւոր մասը, այն է Մարսեան դաշտի վրա կառուցված շինութիւնները:

Գրիգոր Արթուր:

Վրաց «Իմերեթ» լրագրի հաղորդում է, որ Կիպրոս կղզուց եկած մի յոյն ստանալով կառավարութիւնից հանձնարարութիւններ անելու իրաւունքը, այս օրերս Միլիթի մօտ մարմարօտի հանքէ գտել, որտեղից աղիւնները մեծութեամբ մարմարօտի կտորներ են դուրս գալիս:

ՕՐԻՍՏԱՅԻՑ մեզ գրում են. «Այս օրերս լոյս տեսած տեղեկութիւններից քաղելով, աւելորդ չեմ համարում հաղորդել ձեզ հետեւեալը: Մինչև 1889 թ. յունվարի 1-ը Օղէսայում եղած են ուղղափառ եկեղեցի և վանք 46, ոչ ուղղափառ 3, սինագոգ 4 և մզկիթ 10, ընդամենը 9973 ինտիքիւն: Իսկ մինչև անցեալ տարվայ յունվարի 1-ը Օղէսայի տարրական և միջնակարգ դպրոցների աշակերտների և աշակերտուհիների թիւն եղել է 16,862: Թուրքի 1-ին կէսօրվայ ժամանակ 28,700, տաքութիւն էր, իսկ ծովի մակարդակը 190 ր.:

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Այն երեկոյն, որ անտանների տոկոսներով շատ անգամ ծանրաբեռնուած են գիւղացուին զանազան վաշխառուներ, սէքսէն-սէքսէն իւր սէքսէն (80+80=180) հաշիւներով մոլորեցնում են նրան և մինչև անգամ չեն խորշում կեղծ մուրհակներ յօրինել, կեղծ վկաներ ներկայացնել—այդ շատ անգամ առիթ է եղել տեսնելու Քայց երկաղգի, որ քաղաքի մէջ դիրք և կարողութիւն ունեցող անձինք նոյն իսկ եւրօպական գլխաւոր (հագցրած ասիական գլխի վրա) ու զգեստով օր ցերեկով անտառապառ և պաշտօնի աշխատողներ, որ և է 6 րուրու համար՝ գիւղացիներից մաքս կը վերցնեն— չէինք կարող խորհուրդ ենք տալիս պարոններին զգուշանալ և չը ստիպել մեզ մանրամասնութեամբ դուրս բերելու նրանց անհաճոյ գործերը: Sapienti sat»

Թուրքի 4-ից ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Ամսիս 2-ին, 3-ին և մասամբ այսօր քաղաքում հաց չը կայ: Լաւաշ թխողները յայտնելով որ իրանց համար անհաւարին է ալ ևս 1 ր. 70—80 կօպէկով ալիւր առնել և ֆունտը 4 կօպէկով հաց ծախել, հրաժարվել են հաց թխելուց և պահանջում էին ֆունտին 5 կօպ: Մնացեալ վրձնները անկարող լինելով հաց հասցնել քաղաքի ընտանիքներին և 2000-ից աւելի մշակներին, առաջացաւ մի տեսակ սով: Փոռների առաջ խմբված ամբողջ հացէր ուղղով հաց չը կար տանել երեկոյանը լալիս և հաց էին խնդրում, քաղցած մարդիկ դիմելով այս և այն ծանօթին կամ անծանօթ տանը հաց էին խնդրում,—տաղնապը ընդհանուր էր Հացթուխները այնպիսի սև և խմոր հացեր էին սաղարկում ժողովրդի վրա, որ ուրիշ անգամ ոչ ոք չէր առնի: Շատերը նոյն իսկ կարկանդակներով, մրցողչներով էին փորձում խաբել գրգռված ստամոքսը: Ոստիկանութիւնը որոշեց ցանկանալ որ պատժել հացթուխներին՝ անպատկազարար այդպիսի նեղ դրութեան մէջ զրոյց հասարակութիւնը:

ՆՈՐ-ԲԱՍԱՋԷՏԻՑ մեզ գրում են. «Ամառը գալուն պէս, Նոր-Բայազետը մի առանձին կենդանութիւն է ստանում: Ամեն կողմից մարդիկ են գալիս այստեղի առողջ ու զովաբար օդը վայելելու: Աճելու են ընկնում տեղացի ուսանողները, որոնք ամառը այստեղ են վերադառնում: Այս ամառ այստեղ է եկել և նորաւարտ բժշկապետ պ. Վահան Արծրունի, որը իր հայրենակիցներից շատերին և չքաւորներին անվարձ է բժշկում: Ամառվայ արձակուրդները արդէն սկսվել են: Ամսիս 2-ին կատարվեց երկուսու ռուսաւորմանի տարեկան ակտը. ինչպէս հարցաքննութիւններին նոյնպէս և ակտի օրը խուռն բազմութիւն էր հաւաքվել ռուսաւորման Պատարագը վերջանալուց յետոյ հոգեհանգիստ կատարվեց ռուսաւորմանի բոլոր բարեբարների յիշատակին: Ապա դպրոցում աւագ ուսուցիչ պ. Փիլոսոսնայ կարգաց ռուսաւորման մասի հաշիւը, որից երեսուց, —որ աշակերտների թիւը 205, իսկ աշակերտուհիներինը 83 է. աշակերտների մեծ մասը հողագործ զասակարգին են պատկանում: Ուսուցչական խումբը ունեցել է 27 ժողովներ, և այդ ժողովներից մէկում խմբագրվել է «Կիշատակարան» անունով մի գրքիկ ծնողների և աշակերտների պարտաւորութիւնների մասին: «Թիշատակարան» 2-րդ փոխութեամբ հրամանով տպագրվել և բաժանվել է աշակերտներին: Մարմնական պատիժը իսպառ վերացած է ռուսաւորմանից:

Թուրքի 7-ին Թիֆլիսի նահանգական ատեսներ, տեսնելով որ Ախալցխայի քաղաքային դռմայի ձայնաւորների ընտրութիւնները անկանոն կերպով են կատարվել, վճռեց անվաւեր համարել այդ ընտրութիւնները և առաջարկել Ախալցխայի քաղաքապետին նոր ընտրութիւններ կատարել:

«Гражданинъ» լրագրի հաղորդում է, որ մի քանի ռուսներ դիտաւորութիւն ունեն հիմնել մի նոր հեռագրական գործակալութիւն, որը կը մրցի «Հիւսիսային հեռագրական գործակալութեան» հետ: Նոր հեռագրական գործակալութեան մշակված կանոնադրութիւնը շուտով կը ներկայացվի ներքին գործերի մինիստրի հայեցողութեանը և հաստատութեանը: Կառավարութիւնը խնդրած այն արտօնութիւնների փոխարէն, որ ունի «Հիւսիսային գործակալութիւնը», նոր հեռագրական գործակալութիւնը պարտաւորվում է սեփական թղթակցներ ունենալ սլաւոնական բոլոր երկրներում և ի հարկէ, մնացած բոլոր պետութիւններում: Մեր հարեանների հետ պատահած որ և է տարածաշրջանի մէջ գտնուած, նախագծված է հեռագրիւններ ստանալ Նորօպայից Դանիայով և Շվեդիայով: Նոր գործակալութեան անունը կը լինի՝ «Պետերբուրգեան հեռագրական գործակալութիւն»: Հիմնադրիւնների թուում մի քանի դրամատէրեր կան: Հիմնադրիւնները յոյս ունեն նոր գործակալութեան գործողութիւնները սկսել 1890 թ-ի յունվարի 1-ից: Պետերբուրգի մի ուրիշ լրագրի հաղորդած վերջին տեղեկութիւններին նայելով, հեռագրական այդ նոր գործակալութիւնը դժուար թէ աշխդվի:

Թուրքի 7-ին, դատաստանական պալատի քրէական բաժնում քննվում էր կեղծ դրամ շինողների գործը: Մեղադրվում էին՝ Տէր-Ղուկասով, Մէլիքով և Սաֆարով: Դրանցից առաջինը, արհեստով ոսկերիչ, 1886 թ-ի վերջում, Մէլիքովի հրաւերով, եկաւ Նոր-Բայազետ, և սկսեց այնտեղ շինել ռուսական և օտար ոսկէ և արծաթէ կեղծ դրամներ, իսկ վերջինը միջնորդի դեր էր խաղում կեղծ դրամների տարածման համար: Տեղեկանալով որ պոլիցիան հետամուտ է լինում զբաղմունքներին, Տէր-Ղուկասով Նոր-Բայազետից տեղափոխվեց Արզում գիւղը: Գաւառական ոստիկանութիւնը կալանաւորեց Տէր-Ղուկասովին հէնց դրամներ պատրաստելու ժամանակ. նրա բնակարանում գտնվեցան դրամագան մետաղների զանգուած, որից դրամներ էր պատրաստում, մեղքեաններ և դրամաներգութեան համար անհրաժեշտ այլ առարկաներ: Մեղադրեալը կալանաւորվելուց յետոյ, խոստովանեց իր յանցանքը, և մի և նոյն ժամանակ մատնեց Մէլիքովին և Սաֆարովին: Վերջը Տէր-Ղուկասով սկսեց պիղծել, թէ ինքն կեղծ դրամները պատրաստում էր Նոր-Բայազետից գաւառապետի յանձնարարութեամբ: Չը խօսելով այդպիսի մատնութեան ստույգութեան մասին, դործը մանրամասնութիւններից անպայման երեւում է թէ մեղադրեալի յանցաւորութիւնը և թէ այն, որ ոստիկանութիւնը, գաւառապետի հրամանով, երկար ժամանակ հետամուտ էր եղած Տէր-Ղուկասովին, ցանկանալով բռնել նրան կեղծ դրամ շինելու ժամանակ: Իսկ ինչ որ վերաբերում է Մէլիքով և Սաֆարով մեղադրվածներին, բացի Տէր-Ղուկասովի մատնութիւնից, գործի մէջ Մէլիքովի ձեռքով գրված երկու տետրակներ կան, որ մանրամասնաբար արձանագրված են մեղադրվածների հաշիւները՝ կեղծ դրամ պատրաստելու վերաբերեալ: Երևանի նահանգական դատարանը Տէր-Ղուկասով և Մէլիքով մեղադրվածներին դատապարտեց տաժմանակի քաջաւորման ցանցան ժամանակամիջոցով, իսկ Սաֆարովին վճռեց Սիբիր արտօրել: Դատաստանական պալատը, լսելով դատապարտաւորների զանգատները, վճռեց հաստատել Երևանի դատարանի վճիռը, անհետանալ թողնելով նրանց զանգատները:

ԴԱՐԱՉԻՉԱԳԻՑ մեզ գրում են. «Դարաչիչագի շրջանի ամբողջ ազգաբնակչութիւնը շատ թէ քիչ անասնատէր է և այդ անասնատէր ժողովրդի ընտանիքի մի ճիւղը իր կաթնատու անասուններով արդէն իր եայլադատեղում է գործնում: Դրանք եայլադատեղում պարուն են ունենք փոքրիկ գետնափոր և առանց դուրս խրճիթներում, իսկ ունենք քրդերի ձիւն—սև վրաններում: Եայլադ դուրս չեկող ընտանիքը կամ չունենոր պիտի լինի կամ բոլորովին աղքատ Հայուհին ամառը եայլադ դուրս գալով, ջանք է գործ դը-

նում առաջ տանել իր կաթնատու անասնութեան գործը, և այդ երեք ամսվայ ընթացքում, նա իր անասուններից ստացած կաթից իր տան համար պատրաստում է՝ իւր, պանիր և ժափիկ (թանի քամվածքի հիւթը) և այլն: Իւրը և պանիրը նախնական ձևով է պատրաստվում իւրը մաքուր է, իսկ պանիրը անհամ Դրանցից թէ առաջինը և թէ վերջինը մի աննշան քանակութեամբ են արտահանվում: Չը մոռանանք յիշել և այն, որ Դարաչիչագի բաժնում թափառական շատ քրդեր վերաբնակվելով և հայերի հովիւները լինելով, յետ չեն մնում նրանցից իրանց անասուններով եայլադ դուրս գալ նոյն իսկ հայերի մարդագիտիւնների վրա: Քրդերը թէև հայերի անասնապահներն են, սակայն դրանցից շատերի անասունները, մանաւանդ ոչխարները, հաւասար են իրանց աղաների անասուններին և անարգել արածացնում են հայերի իւրը և րոււն:

ՆԵՐՖԻՆ-ԱՅՏԱՅԻՑ մեզ գրում են. «Դարաչիչագի շրջանի եայլադներում քուրդերը, որոնք մեծ մասամբ հայերի հովիւներ են, իրանց աղբիւրները արածացնում են հայերի արօտատեղիներում, կամ իւրը երում: Այդ կողմից հայերը շատ ներողամիտ են, և մեծ օգնութիւն են ցոյց տալիս քուրդերին, այն ինչ հազուադէպ բան է, որ հարեան մալականները հանդուժ մէկը յանդգնի մի երկու կով անգամ արածացնել: Այս մի պայացոյց: Ներքին-Ախալցխայում շատ անգամ ինքնեքս ականատես ենք եղել, թէ ինչպէս մալականների մէջ վերաբնակված մի աստիճանաւոր կամ մի վերահաւան, և ոչ հովիւ, կամեցել էին իրանց ընտանիքի համար երկու կով պահել, դա համար մալական հասարակութիւնը իսկոյն ժողով է կայացրել և իրանց շինական կարգը չը յեղաշրջելու համար վճռել է, «կամ այս ինչ մարդու անասունները դաշտից հեռացնել և կամ ամեն մի հատի արածացնելու համար 2—3 րուրի փող առնել»: Այդ տեսակ վճիռը միշտ անվերել է մնում մալականները չըմնում: Այդ բանում հայերը չեն հետևում իրանց հարեան մալականներին և թող են տալիս քրդերին օգտվել իրանց իւրդերից: Զայտին չէ միայն, թէ արդեօք հայերի և քուրդերի բարեկամական յարաբերութիւններին պէտք է վերադրել այդ բանը, թէ նրան, որ դա մի նորութիւն է, որ միայն դործագրվում է մալականների մէջ»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՆԵՐՖԻՆՆԱՅՏԱՅԻՑ ԴԱՇՆԱԳՈՒԹԵԱՆ ԴԵՄ

Այս մի երկու շաբաթվայ ընթացքում, համարեա թէ միմանց ետեղ կրկին դժգոհութիւն և հակակրական ցոյցներ եղան երեքպետեան, այն է աւատոր-գիւրմանա-խաղական դաշնակցութեան լիւր Վրացայում թէ հասարակաց կարծիք և թէ մամուլի մի շատ մեծ մասը միշտ այն կարծիքն է յայտնել, որ այդ դաշնակցութիւնը՝ փոխանակ խաղաղութեան դործին ծառայելու, աւելի է զգուշացնում պատերազմի խնդիրը, աւելի է մեծացնում վտանգը, և ստիպելով այս և այն պետութիւնները զոյգ լինելու, ստիպում է դրա հետ միասին ամբողջ Եւրօպայի զինուորված վիճակի մէջ մնալու, անհաղին ծախսեր անելու, զորքի վրա միլիարդներ ծախսելու:

Այդ մի կողմից: Իսկ որովհետեւ միւս կողմից երեքպետեան դաշնակցութիւնը իր քաղաքական շատ յայտնի նպատակներն ունի, ուստի նա անպայման վտանգաւոր է համարվում: Հէնց այդ պատճառով այն բոլոր բողոքները, որոնք ուղղած են երեքպետեան դաշնակցութեան դէմ, լաւ տպաւորութիւն են թողնում հասարակաց անկախ կարծիքի վրա: Այդպիսի մի բողոք այս օրերս յայտնեց երբեմն յայտնի ունգարացի գործող, Կոշուտը: Ոգուտ քաղելով խմբովին Պարիզ գնացող ունգարացիներին իրան ներկայանալուց, Կոշուտ նախ համակրութիւն յայտնեց ունգարացիների նպատակին,—այն է Պարիզում համակրական ցոյցի անել ի պատիւ Յրանսիայի, և ապա խօսելով երեքպետեան դաշնակցութեան մասին, բողոք յայտնեց նրա դէմ, և խիստ կերպով յարձակվեց Կոշուտին Տիսսայի վրա, որը երեքպետեան դաշնակցութեան կողմը լինելով թշնամական դիրք է բռնել դէպի Յրանսիան, թէև դա բոլորովին համապատասխան չէ ունգարացիների զգացմունքներին և հայեացքներին: Նոյնաման բողոք արտայայտվեցաւ այս օրերս

և իտալական մամուլի կողմից, որը հասարակաց կարծիքի հետ միասին աւելի և աւելի թշնամական դիրք է բռնում դէպի Գերմանիան, և յարձակվում է Կրիսպին «ստրկական» քաղաքականութեան վրա, բռնու համակրութիւն յայտնելով Յրանսիային: Վերջապէս յայտնի Գերմանիա այս օրերս Թունաստանի անունից Պարիզում խօսելով ուսանողութեան պատգամաւորների հետ, յայտնեց որ երեքպետեան դաշնակցութիւնը հակակրօթեան է միայն արժանի:

Սխալված չենք լինի, թէ ասենք որ նոյն տրամադրութիւնն ունի ամբողջ Եւրօպան, որը այդքան ծանրաբեռնված լինելով զինուորական ծախսերով և միլիտարիզմի ծանրութեան տակ ճնշվելով, անկասկած չէ կարող համակրել այն դաշնակցութեան, որը, ինչպէս ասում են «Յոնքը չի նեղու տեղ» աչքն էլ կը հանի»:

ՏԵՐՖԻՆ-ԱՅՏԱՅԻՑ ԹԻՐԻՔԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Տիգրանակերտից գրում են հետեւեալը. «Քանի մը ամիսներէ ի վեր է որ քաղաքէս 16' ժամ հեռու գտնուող Հայնի գիւղաքաղաքին մէջ Շէյխ Ալի անուն անօրէն չարագործ մը ամեն տեսակ բռնաբարութիւնք, հալածմունք կընէ Հայնի քրիստոնէայ ժողովրդեան: Ամիս մ'առաջ Տիգրանակերտէն քանի մը ոստիկանք կը տարուին բռնելու յիշեալ չարագործն ու իւր արբանեակները, սոքա լսելով աւելի կը զայրանան, կը սկսին յարձակումներ բռնել քրիստոնէայ կանանց և աղջկանց վերայ դաշտերուն, փողոցներուն և լուացքի տեղերուն մէջ: Այս մօտերս համարձակութիւն կունենան տեղոյն Հայոց եկեղեցիի դուռն գալով, նշանակեալ Հայ օրիորդ մը ուղի բռնի, ժողովուրդը կընդդիմանայ, կուկ կը ծագի, քանի մը Հայեր կը վիրաւորուին, վերջը կը յարձակին Հայնի Հայ քահանային և բողոքականաց երեցին վրայ որ ծեծեն փողոցին մէջ: Ասոր վրայ ժողովուրդէն 80-ի չափ անձինք եկան Տիգրանակերտ, ոչ Հայոց Տիգրայպէս ու հարուստները և ոչ անպիկան իրապաւնի Պոլսահան էֆէնտին կարեւորութիւն տուն խեղճերու բողոքներուն, շաբաթի մը չափ պտտեցան, նորէն ետ դացին տեղերնին, լսեցինք հեռագիր մը տուած են ի Պոլիս: Քաղաքիս Ալի-Փոնտար արուարձանէն քանի մը Հայ կանայք և երկու օրիորդք դէպի Տիգրանակերտ դարձած միջոցին կէս ճապան գտնուող տաղաւարներէն 2 տաճիկ յանկարծ կը յարձակին այդ 2 օրիորդաց վերայ և գետին ձգելով կը ջանան բռնի լլկել զանոնք: Խեղճ կանայք և հետերին գտնուող պիտիկ տղանք կըսկսին օգնութիւն պտաւ: մօտերը գտնուող քանի մը Հայեր օգնութեան հասնելով մեծ կռուով կազմեն օրիորդներն»:

Աթէնքի հայ գաղթականութեան վերաբերմամբ արտասահմանի մի հայ լրագրի թղթակցից հետեւեալն է գրում. «Թունիսի 4-ին մի հրաւիրելի Պոլսոյ քահանայի ստորագրութեամբ կանչւում էր և ինձ ներկայ լինել մի ժողովի. ուրախութեամբ խմացայ որ այս հրաւիրագրի նպատակն է վերանորոգել երկու տարի առաջ խանդարեալ ընկերութիւնը: Տէր Պոլսոյ լրջութեամբ նախագահում էր. տէր Ղեմաթ ֆախապետը բացատրեց մի ընկերութեան կարեւորութիւնը. այնուհետև խօսեցան ուրիշները. ուրախալի էր տեսնել թէ ինչպէս Հայ արտասահմանի ընկերութեան յաջողութեան համար գեղեցիկ գործնական առաջարկութիւններ էին անում. մնում է որ այդ լոկ ցանկութիւններ չը մնան Ռուսի մենք սիրով ողջունում ենք Աթէնքի և Պիլիթիսի փոքրիկ հայ գաղթականութեան այս քայլը: այս ցոյց է տալիս որ նոյն մէջ կան աղին սիրտ կողմեր, և դեռ մարած չէ բոլորովին սրբազան կրակը, և թէպէտ 40—50 գաղթականներից հազիւ 15—18 հոգի էին ներկայ, բայց մենք յուսով ենք որ սոքա պիտի կարողանան հռոմեացի ջանքով և միւսներին միացնել և այսպէսով մի բարոյական կապ հաստատել Թունաստանի Հայ գաղթականութեան մէջ: Ապա տեղի ունեցաւ ընկերութեան զինանի անդամների ընտրութիւնը:

Եւզովիայից «Արեւիկ» լրագրին գրում են. «Կառավարութիւնն այս օրեր խստիւ կը պահանջէ աղանի տուրքն երկուց վանդի կողմէն վճարելի, որմէ ազատ էին եղած մեր վանքեր կայսերական բարձրագոյն հրովարտակներով, որը դժբաղդաբար շատ կանխաձեռն այրած են և այսօր չունի Առաջնորդարանի ի ձեռնին երկու վանքեր, որ հազիւ 200 ոչխար ունին, մի քանի տարիներ առաջ ալ դարձեալ կեղք. կառավարութեան

հրամանաց համաձայն այս տուրքն զերծ կը մնային: Այժմ Պատր. Գրիգորի Զայրն կը բանակցի կառավարութեան հետ և ժողովուրդն յոյս մեծ ունի որ շնորհիւ նորա անդու ջանից և պատշաճ դիմումներու մեր վանքեր զերծ կը մնան ըստ առաջնայն այդ տուրքէն և կը բարգաւաճին:

Անհատական խնդրոց կարգին յաճախ կուգան մարդիկ, որք կը սպառնան կրօնափոխ լինիլ այլ և այլ բաներէ դժգոհ. գործընկեր, չքաւորութեան, տրոց, սիրահարութեանց, ընտանեկան գոտորթանց պատճառաւ: Վերջապէս այն որ բանէ մը դժգոհութիւն կունենայ և չը կրնար գոհացում գտնել՝ կերթայ, կը սպառնայ Առաջնորդարան կրօնափոխ լինիլ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Պարիզից դուրս են, որ յունիսի 30-ին պատգամաւորներ ժողովի աղմկակի նիստերից յետոյ, երկու պատգամաւորներ, այն է Լորի և Տոմսոնի մէջ կուր պատահեց, որը վերջացաւ նրանով, որ նրանք միմեանց մենամարտութեան հրաւիրեցին: Մենամարտութիւնը կայացաւ. հակառակորդները ատրճանակներ արձակեցին միմեանց վրա, բայց ոչ մէկն էլ վնաս չը ստացաւ:

— Հռոմից դուրս են, որ ճիշդ է այն լուրը, որը հաղորդում էր թէ պապը կը հեռանայ Հռոմից նոյն իսկ այն դէպքում, երբ խառնարանի հետ պատերազմ կը ծագի:

— Մարդիկից մի քանի տեղեկութիւններ են հաղորդում պապի Սպանիա տեղափոխելու մասին: Այդ տեղեկութիւններն նայելով պապը մի ծածկազրկ հեռացիր է ուղարկել սպանիական զահէ ինստիտուտներ, յայտնելով նրա մէջ, որ Եւրոպան գտնուում է արեւմտեան պատերազմներ ճանապարհի վրա, պատերազմներ, որոնք ահաբեկ ներգործութիւն կարող են ունենալ և Հռոմով վնասել: Սակայն յայտնութիւնը խառնարանի կողմը կը մնայ, այն դէպքում պապը չէ կարող շարունակել Հռոմում մնալ: Բայց և պատերազմի ժամանակ պապը չէ կարող Հռոմում մընալ, որովհետեւ խառնարանը նրա հետ շատ վատ կը վարվեն: Այդ բոլոր պատճառաբանութիւնները բերելով, պապը խնդրում է թագուհի ինստիտուտից թող տալ իրան տեղափոխել Սպանիային պատկանող կղզիներէ մէկը: Սպանիական կառավարութիւնը, թէն դժգոհութեամբ, բայց համաձայնութիւն տուել է:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՌԱՅԻՆԱՅԻՆ ԴՈՐՈՒՄԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՏԱՇԿԵՆՏ, 7 յուլիսի կաշաքարից հաղորդում են, որ յուլիսի 3-ին այնտեղ աւարտվեց այն արձանի կառուցումը, որը շինել է տուել կաշաքարի ռուսաց հիւպատոս Պետրովսկի Միշին-Ա. սիպի յայտնի ճանապարհորդ Ազովի Շալախիտովի գերեզմանի վրա, արձանը, որը ընդ պիւրեմի դիւրեկի ձև, վերինը երկաթէ իւղալով, կառուցված է այն տեղում, ուր Շալախիտով զինուորացի 1857 թվ. օգոստոսի 14-ին, կաշաքարի տիրապետող՝ Վալի-Խան-Թիւրիկի հրամանով Արձանի շինութեան տեղը տուել է չինական կառավարութիւնը, որին այժմ պատկանում է կաշաքարը:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 8 յուլիսի: Մեծ իշխան Կոնստանտին Նիկոլաևիչ, որը գտնուում է այժմ Պալատիկում, հիւանդացու Այսոր հրատարակված է հետևեալ բիւլլետենը. «Պալատիկ, 7 յուլիսի. վերջին ժամանակներս Մեծ իշխանը դանդաղում էր, որ զինի ձախ մասի և մարմնի աջ մասի վրա դանդաղան ցաւեր է գրում, և խոսել դժուարանում է: Չը նայած ձեռք առած բժշկական միջոցներին, այսոր առաւօտեան Նորին Բարձրութեան հիւանդութեան նշանները օստոկացան խոսել չէ կարողանում և աջ կողմում անդամների մէջ կաթուածի նշաններ երևացին: Յիշողութիւնը կատարելապէս ին տեղումն է: Առողջութեան ընդհանուր դրութիւնը գոհացուցիչ է:» «Գրաքանի» լրագիրը հաղորդում է, որ սեպտեմբերին զիւղաւորական ցուցահանդիսի հետ միասին Սոյէնսկում կը լինի համառուական ժողով վուչ մշակողներին «Новости» լրագիրը հաղորդում է, որ մինիստրական մասնաժողովի որոշման համաձայն, կարգադրված է, Պետերբուրգի բարձրագոյն իրական կուրսերում ունկնդիրներ ընդունելը վերականգնել:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 8 յուլիսի: Համայնքների ժողովում արտաքին գործերի մինիստրի օգնականը յայտնեց, որ Ֆրանսիայի և խառնարանի մէջ պատերազմի ծագած դէպքում, բրիտանական կառավարութիւնը կը գործի հանգամանքների և Անգլիայի շահերի համեմատ, որը չէ կապված ոչինչ պարտաւորութիւններով և պայմաններով:

ՊԱՐԻՋ, 8 յուլիսի: Բուլանմէ մի պրոկլամացիայով յայտնեց, որ կրկնաշարութիւնների դէմ հրատարակած օրէնքը չէ արգելում ժողովրդին արտայայտել իր կամքը, իբրև առաջին և բուն բողոք՝ նրա իրաւունքները խախտելու ստոր վարժութիւնի դէմ: Ազգային կուսակցութեան մասնաժողովը վճռեց 80 կանտոններում դնել Բուլանմէի թեկնածութիւնը՝ իրեն զիստաւոր խորհուրդներին անդամ:

ԲԵՂԴԱՐԱՅ, 8 յուլիսի: Կառավարութեանը աշուղակց աւաղակների աւելի կատարել խմբերը ցրվելով: Աւաղակութեան դէպքերը չեն կրկնվում: Գիմադրական կուսակցութիւնը շարունակում է աւաղակութիւնների դէպքերը չափազանցեցնել:

ՊԱՐԻՋ, 8 յուլիսի: Պոլսից ստացած տեղեկութիւններին նայելով, այստեղի պաշտօնական շրջաններում հերքվում է այն լուրը, որ իբր թէ թիւրքիսն միանում է երեքսիսեան զաշնակցութեանը: Բ. Գուլը բացառապէս զբաղված է կրկնաշար գործերով, որոնք աւելի են բարդվում:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 8 յուլիսի: «Journal de St. Petersburg»-ի մէջ տպագրած է թագաւոր Կայսրին բարի գործերին նպատակը Ֆրանսիական ընկերութեան կողմից գրած նամակը: Ընկերութեան խորհուրդը իրան բաղաւոր համարելով համակրութիւն յայտնելով՝ Ռուսաստանին, — Տեղափոխել իրան կաշաքարը համարելով Կայսրի մէջալ՝ յանձնարելու այն դեղեկի վարժութիւնը, լայն Նորին Մեծութիւնը վերաբերվեց դէպի Բորիկ երկաթուղային գծադրութեան դէպքը: Թագաւոր Կայսրը համաձայնութիւն է յայտնել: Ընկերութիւնը մի հանդիսաւոր նիստում վճռեց մէջալ տալ և արդէն հասցրած է ուր հարկն է: Կայսրը հրամայեց ընկերութեանը շնորհակալութիւն յայտնել:

ՄՍԿՎԱ, 8 յուլիսի: Այսօր զիւրեր Նիկոլաևիչ-Կայսր երկաթուղու վաղօրեան արհեստանոցներում հրդեհ պատահեց, որը փայտեց ամբողջ շինութիւնը՝ նրա մէջ գտնված մեքենաներով վնասը շատ մեծ է:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 9 յուլիսի: Մեծ իշխան Կոնստանտին Նիկոլաևիչի առողջութիւնը յուլիսի 7-ին վատացաւ. երկու օրերից յետոյ թուլանում է. մարմնի աջ կողմի կաթուածը ստատիկացաւ. ոչք զգալի կերպով պակասել է. զինքը դէպի լաւ չը գնաց, առաւօտեան դէմ յիշողութիւնը վերականգնվեց և ժամը 4-ին Նորին Բարձրութիւնը հաղորդվեց՝ կատարելա գիտակցութիւն ունենալով:

ՊԱՐԻՋ, 9 յուլիսի: Կաղմակերպվում են ոստիկանական խմբեր, որպէս զի արգելեն խռովարար ժողովները:

ՀՈՒՄ, 9 յուլիսի: Հռոմում կազմակերպված մասնաժողովը, որի նպատակը պիտի լինէր ազատել Տրիեստը և Տրիեստը, փակված է թագաւորական հրամանադրով: Այդ բանի վրա նայում են իբրև մի ապապոյցի վրա, որ խառնարան հրաժարվում է այդ քաղաքները ձեռք բերելու ապագայ գիտուններին:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 10 յուլիսի: Երէկ Նոյա կայսերական Մեծութիւնները բարեհաճեցին գնալ Պալատիկ Մեծ իշխան Կոնստանտին Նիկոլաևիչին այցելելու համար: — Երէկ առաւօտեան բիւլլետենը ոչինչ առանձին փոփոխութիւններ չը հաղորդեց Մեծ իշխան Կոնստանտին Նիկոլաևիչի առողջութեան մասին: — Բարձրագոյն հրամանով հիւանդի մօտ կանգնված է բժշկապետ Բոտկին: — Պետերբուրգ հասաւ Բելգրադի մեր զեպալան Պերսիանի, որը, ինչպէս ասում են, շնորհակալական նամակ է բերել Ալեքսանդր թագաւորին:

ԱՐԵՎԻԿ, 10 յուլիսի: Կրիսէ կղզուց ստացված տեղեկութիւնների համեմատ, յիշատակութիւնը անխառնափոխ է համարվում՝ մասնակաւոր կրկնաշարները հաւաքվում են ծովափից քաղաքներ:

ՐԵՄՍ, Բէտմէիսան չըջանում քրիստոնեաները այրեցին մասնակաւոր մի գիւղ, իսկ Եպիսկոպեան չըջանում նրանք զուրա քնցին մասնակաւորներին, որոնք կամենում էին ժողովել քաղաքների մօտ, որի ժամանակ սպանվեցին երեք մասնակաւոր և մի քրիստոնեայ:

ՎԻԵՆԱ, 10 յուլիսի: Կ. Պոլսի աւտոբոսները կարական զինուորական գործակալ Մանէլայի բողոքարկան զօրքերին արած քննութիւնը կապ ունի աւտոբոսական ինստրուկտորներ Բոլգարիա ուղարկելու մտադրութեան հետ՝ բողոքարկան միւլիցիան վերականգնելու և սովորեցնելու համար:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՍԱ

Թուլիսի 9-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արծաթ	97	85
Բեռլինի վրա 100 մարկ	47	85
Փարիզի վրա 100 ֆրանկ	38	80
Ուկր	7	81
Մաքսային կուպոններ	156	—
Արծաթ	1	13
Բորսային դիվիդենդներ	57	8 7/10
Պետական 5% օտոմ 1-ին շրջանի	98	75
— — — — — 2-րդ	98	62
— — — — — 3-րդ	98	62
— — — — — 4-րդ	98	62
— — — — — 5-րդ	98	62
— — — — — 6-րդ	98	75
Նոր 4% — — — — —	82	37
Արհեստական 5% փոխառութիւն 1-ին շրջ.	99	—
— — — — — 2-րդ	99	—
— — — — — 3-րդ	98	87
Ներքին 5% առաջին փոխառութիւն	260	—

Երկրորդ	241	—
5 1/2% րէնտա	103	—
Ուկրեյն րէնտա	154	50
Եթովպորդ րէնտա	141	75
Նոր երկաթուղային րէնտա	99	—
5% քրաւակալ թղթեր կուրսած	—	—
Փոխ. կրեդ. ընկ. մետ.	148	50
— — — — — թղթադ.	93	—
Գրաւ. թղ. Ազն. բանկի	98	—
Գիւղական բանկի	186	75
6% քրաւ. թղ. Թիֆլիսի—27 և 43 տ.	98	—
— — — — — Թիֆլիսի—18 և 43 տ.	98	50

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԶԱՊԱՅԱՅԻՆ ՕՐԻՒՅԱԿԱՆՆԵՐ
Զապահներ
Մօակայի քաղաք. օրկապահիներ . . . 94 > 75 >
Օղէսայի . . . 94 > 75 >
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օրկ. . . 84 > 50 >
Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը հանդարտ է:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՅ

ԲԱԳՈՒ. Ա. Միլիթարեան. Չեր ուղարկած 10 րուլլին յանձնարարեցին, որպէս զի ձեզ ուղարկեն ձեր ցանկացած Հնութիւն հայրենեաց) նը կարենք:

ԲԱԳՈՒ. Մ. Ա. Ստացանը ձեր գրուածքի առաջին մասը. սպասում ենք երկրորդին: Նեղութիւն կրեցէք մի քանի մասնաւոր տեղեկութիւններ տալ այդ գրուածքի մասին:

Ժամանակաւոր Խմբագիր Թ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆՏ
Հրատարակիչ ԳՐԻԳՈՐ ԱՐՄԻՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՅԲԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳԵԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԻԻ և ԲԱՐՍԵԼՈՆԵ՝ մէջ և փոխադարձ Հինգշաբթի, յուլիսի 20-ին, ՄԻՆԳՐԵԼԻԱ (MINGRELIE) շոգնուրը, նաւապետ ԺԻՐՈՒԷՆ (GIBOIN) զուրա կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Սամսոն, Կ. Պոլսի և Մարտէշի: Տեղեկութիւնների մասին պէտք է զինք ընկերութեան գործակալներին, Բաթումում Լէմբոլուի տան, Նարեկէմայա, և Թիֆլիսում Նախիկ Արժախի գալլերէում, № 114.

1—2

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Ե Ր Կ Ո Ւ Ս Ե Ռ Ի Ա Ն Չ Ա Ն Յ Հ Ա Մ Ա Ր

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհորդ հմուտ հաշուապահներ: Առարողները ստանում են ատեստատներ:

Աւանդելի տարակազ օրը են՝ 1) Առևտրական հետեւութիւն, 2) Առևտրական թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համընթաց վրա, 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնադրութիւն և 7) գեղագրութիւն:

Աւտումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից, ընդունվող թիւանքների սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, երկուշաբթի 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնովի բնակարանում, Սոյուզիում, Աղէքսանդր ֆրիդմանի տանը, № 9 Սերգիէյկայա և Նազորույա փողոցների անկիւնում, զեղատան դիմաց: Ծրագիրը ու կանոնները կարելի է ստանալ ՋԻՐԱՊԵՍ եղբ. Ծովանդների բանկային գրասենյակում և կուրսեր հիմնովի բնակարանում: Օտարաբարաքցիք զինում են կուրսերի հիմնովին.—въ Тифлисъ, С. П. Мануэляндю.

2—20 (6. 7.)

С. А. ЕПАЗАРОВЪ

ИЗСЛѢДОВАНИЯ ПО ИСТОРИИ УЧРЕЖДЕНІЙ ВЪ ЗАКАВКАЗЬИ

ЧАСТЬ I

СЕЛЬСКАЯ ОБЩИНА

Сословный строй, внутренняя организация и управление общины въ связи съ землевладѣніемъ, водовладѣніемъ и податнымъ обложеніемъ.

Цѣна 2 р. 75 к.

Продается въ Казани, въ книжномъ магазинѣ А. А. Дубровина.

2—10 (4)

ԲԺՇԱՊԵՏ Գ. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՏ (Թիֆլիսցի) տեղափոխվելով Մանգլիս ամառանոցը, մինչև սեպտեմբեր ամիսը հիւանդների ընդունում է ՄԱՆԳԼԻՍՈՒՄ, Պրոտուգարով-կա, տուն վասիլ Գուտովի:

2—5